Շաբաթական ակնարկ 28.04.25

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ-ի բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:



ԱՄՆ պարտատոմսերի եկամտաբերությունը զգալիորեն նվազել է:

Ոսկին այս տարի գրանցեց անկման երրորդ շաբաթը:

Երեք շաբաթ անընդմեջ անկումներից հետո դոլարը որոշակի աճ գրանցեց:



Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը աճեց 4.60 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը աճեց 6.41 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը աճեց 2.47 % -ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը աճեց 4.10 %-ով

Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան նախորդ շաբաթվա ընթացքում.

- Նախորդ շաբաթ ԱՄՆ-ի բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն, առաջատարը NASDAQ-ն էր, որը գրանցեց 6% աճ, ինչը նրա երկրորդ լավագույն շաբաթն էր 2023 թվականի նոյեմբերից ի վեր:
- Այս դրական դինամիկան պայմանավորված էր երկու հիմնական գործոններով՝

1. Առևտրային լարվածությունը թուլանում է, քանի որ նախագահ Թրամփը մեղմացնում է Չինաստանի նկատմամբ իր մաքսատուրքային քաղաքականությունը:
2. Խոշոր տեխնոլոգիական ընկերությունները ներկայացնում են սպասվածից դրական հաշվետվություններ, որը մեծցրել է ներդրողների վստահությունը տեխնոլոգիական ոլորտի նկատմամբ:

- Նախորդ շաբաթ հայտարարություններ եղան ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև առևտրային բանակցություններում առաջընթացի մասին, ինչը նպաստեց շուկայի էլ ավելի բարձր կատարողականին:



Նախորդ շաբաթ MAG7-ը գրանցեց զգալի աճ՝ Alphabet-ի ուժեղ ցուցանիշների և Tesla-ի դրական նորությունների ֆոնին: Այս զամբյուղի բաղադրիչների միջև բարձր փոխկապակցվածությունը նպաստեց զամբյուղի այլ բաժնետոմսերի աճին:

VIX ինդեքսը երկրորդ շաբաթն անընդմեջ նվազում է՝ հասնելով 24 դոլարի մակարդակին: Այնուամենայնիվ VIX-ը մնում է 20 դոլարից բարձր մակարդակներում խոշոր ընկերությունների կողմից սպասվող հաշվետվությունների և հիմնական մակրոտնտեսական տվյալների առաջիկա հրապարակումների սպասումների պատճառով:

Alphabet-ը (GOOG/L) հրապարակեց տպավորիչ ֆինանսական արդյունքներ՝ գերազանցեց EPS-ի և հասույթի սպասումները համապատասխանաբար 39.74% և 1.21%-ով: Գովազդից ստացված եկամուտը հասել է 66.89 միլիարդ դոլարի՝ աճելով 8.5%-ով, զուտ եկամուտը աճել է 46%-ով՝ հասնելով 34.54 միլիարդ դոլարի: Բացի այդ, 2025-ին ընկերությունը նախատեսում է կապիտալ ծախսերի մեջ ներդնել 75 միլիարդ դոլար և թույլատրել է 70 միլիարդ դոլարի բաժնետոմսերի հետգնումը:

Tesla-ն (TSLA) բաց թողեց EPS-ի և հասույթի սպասումները, իսկ ավտոմեքենաներից ստացված հասույթը տարեկան կտրվածքով նվազել է 20%-ով, սակայն վերջին շաբաթվա ընթացքում ընկերության բաժնետոմսերի գինը բարձրացել է: Այս աճի հիմնական շարժիչ ուժը նոր մոդելների և ռազմավարական նախաձեռնությունների մասին հայտարարություններն էին, որոնց արդյունքում ներդրողների սպասումները ընկերության երկարաժամկետ աճի վերաբերյալ մեծացել է:

Procter & Gamble Company-ն (PG) գերազանցեց EPS-ի սպասումները, սակայն բաց թողեց հասույթի սպասումները: Բացի այդ, ընկերությունը նվազեցրել է իր ամբողջ տարվա հիմնական EPS-ի և հասույթի սպասումները՝ մաքսատուրքերի և հաճախորդների շրջանում անորոշության պատճառով: Գործադիր տնօրենը նշեց, որ ընկերությունը «հավանաբար» կբարձրացնի ապրանքատեսականու գները հաջորդ ֆինանսական տարում, ինչը հանգեցրեց բաժնետոմսերի գնի աննկմանը:

International Business Machines-ը (IBM) գերազանցեց EPS-ի և հասույթի սպասումները, սակայն ընկերության բաժնետոմսերի գինը նվազեց: Սա տեղի է ունենում այն բանի ֆոնին, երբ ԱՄՆ կառավարության արդյունավետության դեպարտամենտը (DOGE) կասեցրել է IBM-ի հետ կնքված 15 պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում էր մոտ 100 միլիոն դոլար: Իսկ, ծրագրային ապահովման և հիբրիդային ամպային ծառայությունների հատվածները չարդարացրին ներդրողների սպասումները:



Պարտատոմսերի շուկա

- Նախորդ շաբաթ պարտատոմսերի գները շարունակեցին աճել, (եկամտաբերությունը նվազեց, իսկ գները՝ բարձրացան), առաջատարը երկարաժամկետ պարտատոմսերն էին:
- Սա կարելի է բացատրել մաքսատուրքերի շուրջ բանակցություններով, որոնք մեծացրել են ներդրողների հույսերը տոկոսադրույքի իջեցման վերաբերյալ, քանի որ գնաճը կարող է չհասնել մինչ Ազատագրման օրը սպասվող բարձր մակարդակին:

Մաքսատուրքերի մեղմացման մասին լուրերի ազդեցությունը ակնհայտ ազդել է 5-ամյա պարտատոմսերի վրա, որոնց եկամտաբերությունը նվազել է 4.00%-ից ցածր, ինչը համապատասխանում է Ազատագրման օրվա արդյունքներից առաջ գրանցված մակարդակներին:



Երեք շաբաթ անընդմեջ կորուստներից հետո դոլարը գրանցեց չնչին աճ, որին նպաստեց մաքսատուրքերի վերաբերյալ բանակցությունների դրական լուրերը, որոնք բարձրացրին դոլարի գնողունակության վերաբերյալ սպասումները:



Ոսկին տարվա ընթացքում գրանցեց իր երրորդ բացասական շաբաթը՝ հատեց ռեկորդային 3,500 դոլարի մակարդակը, սակայ հետո նվազեց 0.5%-ով: Անկումը պայմանավորված էր ոսկուց դեպի ավելի ռիսկային ակտիվներ զուտ արտահոսքով:

Արծաթի գները վերջին շաբաթվա ընթացքում աճել են՝ պայմանավորված արդյունաբերական պահանջարկի աճով: Որպես ավելի ապահով ներդրումային ակտիվ՝ արծաթը և վերջինիս ցածր գինը ներդրողների տեսանկյունից ավելի գրավիչ գործիք է հանդիսանում, քան ոսկին:

- Նախորդ շաբաթը կրիպտոարժույթների շուկայի համար դրական էր, բոլոր հիմնական արժույթները աճել են: Բիթքոյնի գինը փետրվարից ի վեր առաջին անգամ բարձրացավ 96,000 դոլարի:
- Ավելին, կրիպտոարժույթների շուկայից ստացված դրական լուրերը հանգեցրել են դեպի ETF-ներ ներհոսքի՝ հասնելով հունվարից ի վեր ամենաբարձր մակարդակին:



Ըստ KOBEISSI LETTER-ի՝ նախորդ շաբաթ դեպի ԱՄՆ պարտատոմսերի ֆոնդեր զուտ ներհոսքը գերազանցել է մոտ 19 միլիարդ դոլարի մակարդակը, որը գերազանցում է 2020 թվականի համավարակի ժամանակ գրանցված 14 միլիարդ դոլարի առավելագույն ցուցանիշը: Արդյունքում, 4 շաբաթվա սահող միջինը բարձրացել է մինչև մոտ 7 միլիարդ դոլարի, ինչը ամենաբարձր ցուցանիշն է 2023 թվականի մարտից ի վեր:



Ըստ KOBEISSI LETTER-ի՝ S&P 500 ինդեքսը այս տարի առևտրային օրերի 23%-ում կամ շաբաթական առնվազն մեկ անգամ գրանցել է 2% տատանում երկու ուղղություններով էլ: Սա ամենաբարձր մակարդակն է 2022 թվականից ի վեր, երբ այս ցուցանիշը ամբողջ տարվա համար հասել էր 29%-ի: Համեմատության համար, երկարաժամկետ միջինը ամսականը մոտ երկու անգամ է:
Bloomberg-ի տվյալներով՝ ապրիլը լինելու է պատմության մեջ երրորդ ամենաանկայուն ամիսը՝ 2008 թվականի հոկտեմբերից և 2020 թվականի մարտից հետո:



Ըստ KOBEISSI LETTER-ի՝ ոսկու գների և S&P 500-ի աճի տարբերությունը տարվա սկզբից ի վեր գերազանցել է 32.6 տոկոսային կետը, ինչը ամենաբարձր ցուցանիշն է առնվազն 1975 թվականից ի վեր: Սա գերազանցում է 2020 թվականի նույն ժամանակահատվածի մոտ 26.0 տոկոսային կետի նախորդ ռեկորդը:



Note: Historical YTD through April 24 gold vs S&P 500 performance

Most active gold futures vs. the S&P 500. (Dow Jones Market Data, FactSet)

ԱՄՆ-ի տնտեսական օրացույց

Այս շաբաթ 146 ընկերություններ պատրաստվում են հրապարակել 4-2024 եռամսյակի իրենց ֆինանսական հաշվետվությունները: Առավել հայտնի ընկերություններից են՝ Apple Inc-ը (AAPL), Microsoft Corporation-ը (MSFT), Amazon-ը (AMZN) և այլ կազմակերպություններ:

#1 / 792 Total save as portfolio | create alert Refresh: 3min | off Page 1 / 40

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change	Volume
1	AAPL	Apple Inc	Technology	Consumer Electronics	USA	3143.82B	33.27	209.28	0.44%	38,132,498
2	MSFT	Microsoft Corporation	Technology	Software - Infrastructure	USA	2913.01B	31.56	391.85	1.17%	18,803,717
3	AMZN	Amazon.com Inc	Consumer Cyclical	Internet Retail	USA	2005.63B	34.22	188.99	1.31%	36,313,537
4	META	Meta Platforms Inc	Communication Services	Internet Content & Information	USA	1381.87B	22.88	547.27	2.65%	17,049,488
5	LLY	Lilly(Eli) & Co	Healthcare	Drug Manufacturers - General	USA	838.53B	76.99	884.54	2.89%	3,391,616
6	V	Visa Inc	Financial	Credit Services	USA	654.78B	34.24	335.17	-0.16%	4,450,484
7	MA	Mastercard Incorporated	Financial	Credit Services	USA	485.10B	38.41	533.48	-0.37%	2,005,907
8	XOM	Exxon Mobil Corp	Energy	Oil & Gas Integrated	USA	469.60B	13.83	108.57	-0.06%	11,243,910
9	KO	Coca-Cola Co	Consumer Defensive	Beverages - Non-Alcoholic	USA	309.47B	29.22	71.91	-0.84%	16,312,208
10	CVX	Chevron Corp	Energy	Oil & Gas Integrated	USA	242.32B	14.30	138.73	-0.24%	6,875,289
11	MCD	McDonald's Corp	Consumer Cyclical	Restaurants	USA	226.49B	27.80	316.74	0.16%	2,282,625
12	AZN	Astrazeneca plc ADR	Healthcare	Drug Manufacturers - General	United Kingdom	215.75B	30.87	69.57	0.03%	6,661,497
13	LIN	Linde Plc	Basic Materials	Specialty Chemicals	United Kingdom	212.05B	32.93	448.40	-0.25%	1,865,281
14	HSBC	HSBC Holdings plc ADR	Financial	Banks - Diversified	United Kingdom	197.90B	9.09	55.99	0.52%	1,288,943
15	SHEL	Shell Plc ADR	Energy	Oil & Gas Integrated	United Kingdom	196.37B	13.13	65.86	1.25%	3,598,337
16	QCOM	Qualcomm, Inc	Technology	Semiconductors	USA	164.31B	15.88	148.56	0.92%	5,141,916
17	BKNG	Booking Holdings Inc	Consumer Cyclical	Travel Services	USA	157.93B	27.96	4838.44	0.22%	189,510
18	AMGN	AMGEN Inc	Healthcare	Drug Manufacturers - General	USA	150.99B	37.22	280.84	0.36%	1,994,149
19	SPGI	S&P Global Inc	Financial	Financial Data & Stock Exchanges	USA	150.64B	38.87	480.00	-0.26%	979,049
20	CAT	Caterpillar Inc	Industrials	Farm & Heavy Construction Machinery	USA	146.46B	13.88	306.45	-0.13%	2,162,138

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

MONDAY, APRIL 28				
	None scheduled			
TUESDAY, APRIL 29				
8:30 am	Advanced U.S. trade balance in goods	March	--	$147.8B
8:30 am	Advanced retail inventories	March	--	0.1%
8:30 am	Advanced wholesale inventories	March	--	0.3%
9:00 am	S&P Case-Shiller home price index (20 cities)	Feb.	--	4.7%
10:00 am	Consumer confidence	April	87.7	92.9
10:00 am	Job openings	March	7.4M	7.6M
WEDNESDAY, APRIL 30				
8:15 am	ADP employment	April	110,000	155,000
8:30 am	GDP	Q1	0.4%	2.4%
8:30 am	Employment cost index	Q1	1%	0.9%
9:45 am	Chicago Business Barometer (PMI)	April	45.5	47.6
10:00 am	Consumer spending	March	0.5%	0.4%
8:30 am	Personal income	March	0.4%	0.8%
10:000 am	PCE index	March	0.0%	0.3%
10:00 am	PCE (year-over-year)		2.2%	2.5%
10:00 am	Core PCE index	March	0.1%	0.4%
10:00 am	Core PCE (year-over-year)		2.5%	2.8%
10:00 am	Pending home sales	March	1%	2%

THURSDAY, MAY 1				
8:30 am	Initial jobless claims		226,000	222,000
9:45 am	S&P final U.S. manufacturing PMI	April	--	50.7
10:00 am	ISM Manufacturing	April	47.8	49.0
10:00 am	Construction spending	March	0.3%	0.7%
TBA	Auto sales	April		17.2%
FRIDAY, MAY 2				
8:30 am	U.S. nonfarm payrolls	April	130,000	228,000
8:30 am	U.S. unemployment rate	April	4.2%	4.2%
8:30 am	U.S. hourly wages	April	0.3%	0.3%
8:30 am	Hourly wages year over year		--	3.8%
10:00 am	Factory orders	March	3.4%	0.6%

060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am